ARABKIR MEDICAL CENTRE
Արաբկիր
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH

Անհետաձգելի և պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը «Արաբկիր» ԲՀ-ում COVID-19 վարակի պայմաններում



2020

«Արաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտում» անհետաձգելի և պլանային բժշկական գործունեության կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում

Արտակարգ դրության ժամանակահատվածում «Արաբկիր բժշկական համալիր - Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ»-ում (Արաբկիր ԲՀ) ցանկացած բժշկական պլանային գործունեություն կարգավորվում է կոլեկտիվ պայմանագրով համաձայնեցված, տնօրինության կողմից հրամանով հաստատված կանոններով և դրանց խախտումը բերում է վարչական տույժի՝ մասնագիտական գործունեության իրավունքի ժամանակավոր դադարեցում առանց վարձատրության՝ առաջին անգամ 15 օրով, կրկնակի դեպքերում՝ 1 ամսով:

1. COVID-19 վարակի պայմաններում անհետաձգելի և պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը պահանջում է հատուկ ուշադրություն և կարգապահություն՝ ներհիվանդանոցային վարակման ռիսկը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև բժշկական անձնակազմի առողջությունը պահպանելու նպատակով:
2. Բուժաշխատողները հիվանդանոց այցելելուց առաջ տանը կատարում են ջերմաչափում: 37.0^{0}C և բարձր ջերմություն գրանցելու դեպքում բուժաշխատողը մնում է տանը և այդ մասին տեղեկացնում է տնօրինությանը (բժշկական տնօրենին, բաժնի վարիչին, համաճարակաբանին):
3. Համալիրի բուժաշխատողների ընտանիքի անդամների մոտ բարձր ջերմության կամ COVID-19 վարակի կասկածելի նշանների առկայության դեպքում բուժաշխատողը մնում է տանը և այդ մասին տեղեկացնում է տնօրինությանը (բժշկական տնօրենին, բաժնի վարիչին, համաճարակաբանին):
4. Բժշկական հաստատության մուտքերի մոտ ամենօրյա ռեժիմով իրականացվում է յուրաքանչյուր բուժաշխատողի ջերմաչափում: 37.0^{0}C և բարձր ջերմության գրանցելու դեպքում պարտադիր կերպով կատարվում է կրկնակի ստուգում սնդիկային ջերմաչափով: Բարձր ջերմության հաստատման դեպքում բուժաշխատողը առանձնացվում է համապատասխան մեկուսացման սենյակում՝ միաժամանակ տեղեկացնելով հիվանդանոցի տնօրինությանը և համաճարակաբանին:
5. Անհետաձգելի և պլանային բժշկական գործունեությունները ներառում են.

   ա) հոսպիտալացված պացիենտների վարում և բուժում, ներհիվանդանոցային խորհրդատվություններ,

   բ) ամբուլատոր կարգով կազմակերպվող խորհրդատվություններ, հետազոտություններ և բուժում, դիսպանսեր հիվանդների վարում:

6. «Արաբկիր» բժշկական համալիրի աշխատանքները կազմակերպվում են այս կանոնակարգով, ինչպես նաև տարբեր բաժանմունքների և ծառայությունների համար առանձին հաստատված կանոնակարգերով:
7. Բժշկական խորհրդատվություն և/կամ ներհիվանդանոցային բժշկական օգնություն ու սպասարկում ստանալու համար քաղաքացիների մուտքը բժշկական հաստատություն կազմակերպված է առանձին անհետաձգելի և պլանային դեպքերի համար, ինչի մասին նշված է ցայտուն երևացող ցուցանակներով՝
    - անհետաձգելի բժշկական օգնության դեպքերի համար
    - պլանային բժշկական օգնության դեպքերի համար
    - «Իզոլացված թոքաբանական բաժանմունք» COVID-19 հաստատվածների համար
    - «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունք» COVID-19 կասկածելի կամ կոնտակտավորների համար:
8. «Արաբկիր» բժշկական համալիրում անհետաձգելի և պլանային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով դիմած պացիենտների, ինչպես նաև բժշկական անձնակազմի համար առանձնացված մուտքերն ամրագրված են **Հավելված 1-ում:**
9. Անհետաձգելի և պլանային դեպքերի ընդունելության և խորհրդատվության համար նախատեսված տարածքներն ամբողջությամբ առանձնացված են:
10. Բոլոր պլանային խորհրդատվությունները և հետազոտությունները պետք է կատարվեն նախօրոք պայմանավորվածության համաձայն: Բացառվում են պլանային խորհրդատվություններն՝ առանց նախնական ժամադրության և հերթագրման՝ մարդկանց կուտակումներից խուսափելու նպատակով:
11. Պացիենտը և նրան ուղեկցող քաղաքացին (թույլատրվում է միայն մեկ անձի ուղեկցություն մինչև 18տ. պացիենտի պարագայում, 18տ.-ից բարձր պացիենտին թույլատրվում է ունենալ 1 ուղեկցող, եթե նրա ֆիզիկական վիճակն է դա պահանջում) պետք է ունենան անհատական պաշտպանության միջոցներ (դիմակ), ինչի մասին նրանց նախապես տեղեկացնում են մատենավարը կամ բժիշկը՝ հեռախոսով ժամադրության օրն և ժամը ճշտելիս: Առանց դիմակ հիվանդանոցի տարածք մուտքն արգելվում է, ինչի մասին նշված է հիվանդանոցի մուտքերի մոտ տեղադրված ցայտուն երևացող ցուցանակներում:
12. Բժշկական հաստատության մուտքերի մոտ պացիենտներին դիմավորում են համակարգող բուժքույրերը՝ համապատասխան արտահագուստով և անհատական պաշտպանիչ միջոցներով (դիմակ, ձեռնոց): Նրանք պարտադիր կերպով իրականացնում են յուրաքանչյուր պացիենտի և նրան ուղեկցող անձի ջերմաչափում՝ ճշտելով պլանային այցի մասին նախնական պայմանավորվածությունը, իսկ անհետաձգելի դեպքերում նաև գանգատները: Ընդ որում այս ամենը կատարվում բացառապես պացիենտի գրանցումից և խորհրդատվությունից առաջ:

13. Պացիենտի կամ ուղեկցողի մոտ 37.0^{0}C և բարձր ջերմություն գրանցելու դեպքում պարտադիր կերպով կատարվում է կրկնակի ստուգում սնդիկային ջերմաչափով: Բարձր ջերմության հաստատման դեպքում անմիջապես հավաքագրվում է համաճարակաբանական անամնեզ, պացիենտն ու ուղեկցողը առանձնացվում են համապատասխան մեկուսացման սենյակում՝ միաժամանակ տեղեկացնելով հիվանդանոցի համաճարակաբանին:
14. Պլանային և դիսպանսեր պացիետների այցելությունների կանոնակարգման նպատակով յուրաքանչյուր ծառայությունում առանձին-առանձին կազմվում է համապատասխան օրվա այցերի և խորհրդատվությունների գրաֆիկ:
    - Հաջորդ օրվա գրաֆիկը հանձնվում է համապատասխան ծառայության մատենավարին՝ մինչև ժամը 16:00:
    - Օրվա այցելուների և խորհրդատվությունների գրաֆիկը հանձնվում է մուտքերի մոտ պացիենտին դիմավորող համակարգող բուժքրոջը՝ առավոտյան 09:15-ին:
    - Պլանային պացիենտների ընդունելությունը սկսվում է ժամը 10:00-ից և ավարտվում 16:00-ին:
    - Գրաֆիկը կազմվում է նախապես՝ համաձայնեցվելով պլանային հիվանդներին սպասարկող ծառայությունների հետ՝ այնպես, որ ապահովվի բուժհաստատության ներսում գտնվող պացիենտների/այցելուների թույլատրելի օպտիմալ քանակը (հաշվի առնելով այցի միջին տևողությունը (մինչև 20-30 րոպե) և մարդկանց միջև պահանջվող սոցիալական հեռավորությունը):
    - Վերը նշված պայմանները ապահովելու նպատակով խորհրդատվությունները կարող են կազմակերպվել շաբաթվա 6 օրերի ընթացքում՝ սողացող աշխատանքային գրաֆիկով:
    - Կանոնակարգով չնախատեսված դեպքերում այցելությունը կարող է կազմակերպվել անհատական եղանակով՝ համաձայնեցվելով ծառայության ղեկավարի կամ տնօրինության հետ:

15. Այն պացիենտները, ովքեր օգտվում են պետպատվերի իրավունքից, որի հիմք է հանդիսանում համապատասխան ուղեգիրը, ուղեգիր վերցնելուց առաջ պետք է նախապես պայմանավորվածություն ձեռք բերեն համալիրի համապատասխան ծառայության մատենավարի կամ բժշկի հետ, ապա նոր վերցնեն ուղեգիրը իրենց ընտանեկան բժշկից / տեղամասային մանկաբույժից:
16. Խորհրդատվությունների և բժշկական միջամտությունների ժամանակ անձնակազմը պետք է ապահովված լինի համապատասխան անհատական պաշտպանության միջոցներով՝ բժշկական արտահագուստ, դիմակներ, ձեռնոցներ, ձեռքերի ախտահանիչ նյութեր:

17. Պացիենտի հիվանդության պատմությունը հավաքագրելիս մատենավարը և/կամ բուժաշխատողը պետք է պահպանեն սոցիալական հեռավորություն:
18. Սպասասրահներում, աշխատանքային սենյակներում և զննման սրահներում ապահովել բնական օդափոխության հնարավորություն, ինչպես նաև մշտապես ունենալ ախտահանող և անհատական պաշտպանության միջոցներ:
19. Հիվանդին զննելուց առաջ և հետո բուժաշխատողները պարտադիր ախտահանում են ձեռքերը, կատարում են սենյակի և օգտագործված գործիքների ախտահանում:
20. Բոլոր գրանցումները և գրագրությունները իրականացնել էլեկտրոնային համակարգերով՝ HISAM ARMED: Խնդիրների առաջացման և դրանց շտկման անհնարինության դեպքում անմիջապես տեղեկացնել պատասխանատուներին՝ միառժամանակ գրանցումները և գրագրությունները անելով թղթային:
21. Հիվանդանոցային բուժօգնության ողջ ընթացքում խնամողի փոփոխությունն անցանկալի է:
22. Արտահիվանդանոցային կրկնակի այցերի դեպքում ցանկալի է մշտապես նույն ուղեկցող անձի մուտքը հիվանդանոց:
23. Եթե պացիենտը հիվանդանոցում հետազոտման կամ բուժման ընթացքում գնահատվում է որպես կասկածելի կամ կոնտակտավոր կամ COVID-19 վիրուսով հաստատված, անմիջապես պետք է՝
    - պացիենտին մեկուսացնել ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում,
    - տեղեկացնել հիվանդանոցի համաճարակաբանին և տնօրինությանը
    - պարզել պացիենտի հետ կոնտակտի մեջ եղած բուժանձնակազմի անդամներին
    - կազմակերպել հակահամաճարակաբանական բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ վարակի տարածումը կանխելու նպատակով
    - իրականանել նմուշառել թեստավորման նպատակով

Հավելված 1

«Արաբկիր» ԲՀ-ում անհետաձգելի և պլանային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև բժշկական անձնակազմի համար առանձնացված մուտքերի նկարագրություն

1. Անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով պացիենտների ընդունելությունը իրականացվում է հիվանդանոցի ընդունարանի հիմնական մուտքով: Անհրաժեշտության դեպքում որպես լրացուցիչ մուտք օգտագործվում է ուրո-վիրաբուժական մասնաշենքի մուտքը:
2. Ընդունարանի մուտքը բաց է ամեն օր, 24 ժամ:

3. Համալիրի ընդունարանը սպասարկում է շտապ և անհետաձգելի բուժման կարիք ունեցող մանկաբուժական (այդ թվում, նեղ մասնագիտական՝ վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի, նեֆրոլոգիական, նյարդաբանական, գաստրոէնտերոլոգիական և այլ) և վիրաբուժական (այդ թվում, նեղ մասնագիտական՝ ուրոլոգիական, քիթ-կոկորդի-ականջի սուր հիվանդություններ և այլ) հիվանդություններով պացիենտներին:
4. Պլանային կարգով վիրաբուժական, ուրոլոգիական, օրթոպեդիկ, նյարդաբանական, նյարդավիրաբուժական, ռևմատոլոգիական, նեֆրոլոգիական, հեմոդիալիզի, ցավի կենտրոնի, լազերային կոսմետոլոգիայի ծառայության այցելուների/պացիենտների և սպասարկող բուժանձնակազմի, ինչպես նաև ինքնահոս կամ ուղեգրված այն այցելուների համար, որոնք կարիք ունեն ճառագայթային-ախտորոշիչ կամ լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների՝ հատկացվում է «Արաբկիր Պլյուս» մասնաշենքի մուտքը (երկուշաբթի – շաբաթ օրերին, ժամը 10:00 – 16:00):
5. Պլանային մանկաբուժական, թերապևտիկ, ստոմատոլոգիական, գինեկոլոգիական, ակնաբուժական, սրտաբանական, ալերգոլոգիական, թոքաբանական, գաստրոէնտերոլոգիական, պարբերական հիվանդության, քիթ-կոկորդ-ականջաբանական, սուրդոլոգիական, էնդոկրինոլոգիական ծառայությունների այցելուների/պացիենտների ու բուժաշխատողների համար հատկացված է «Արաբկիր» բժշկական համալիրի կենտրոնական մուտքը (երկուշաբթի – շաբաթ օրերին, ժամը 10:00 – 16:00):
6. COVID-19 կոնտակտավոր և կասկածելի պացիենտների համար, որոնք կասկածով ուղեգրված են կամ ուղղորդված, հատկացված են բոքսային մեկուսացված հիվանդասենյակների մուտքերը՝ բակի կողմից:
7. COVID-19 հաստատված դեպքերի համար մուտք է հանդիսանում «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքի հատուկ առանձնացված և կանխարգելիչ բոլոր պարագաներով ապահովված «D» մասնաշենքի առաջին հարկի մուտքը:

Հավելված 2

COVID-19 վարակի պայմաններում «Արաբկիր» ԲՀ-ի առանձին ստորաբաժանումներում անհետաձգելի և պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը

Աշխատանքի կազմակերպումն ընդունարանում, անհետաձգելի բուժօգնության և բոքսային բաժանմունքներում

- **Անհետաձգելի բուժօգնության և բոքսային բաժանմունքներում** իրականացվում է բացառապես սուր և անհետաձգելի դեպքերի վարում. պլանային և ամբուլատոր կարգով պացիենտների վարումը դադարեցված է:
- Այլ բաժանմուքների պացիենտների պլանային կարգով մուտքն ընդունարանով բացառվում է: Պլանային հիվանդանոցային բուժօգնության պատմագրերի ձևակերպումն իրականացվում է համապատասխան ծառայությունների ամբուլատոր ստորաբաժանումներում:
- Սուր և անհետաձգելի դեպքերում հիվանդների մուտքն իրականացվում է ընդունարանով, յուրաքանչյուր հիվանդ երեխային կարող է ուղեկցել առավելագույնը մեկ անձ/մեկ խնամող, որը կպահպանի սանիտարահիգիենիկ անվտանգության և ներհիվանդանոցային վարակի տարածման կանխարգելման կանոնները, և որը մուտք գործելու պահից այլ փոխարինող չի ունենա:
- Նախաընդունարանում կատարվում է առաջնային տրիաժ՝ հատուկ պաշտպանական արտահագուստով համակարգող բուժքրոջ կողմից, և ուղեկցողի, և երեխայի համաճարակաբանական անամնեզի ու գանգատների ճշտում և ջերմաչափում, ինչից հետո որոշվում է երեխայի հիվանդանոց ընդունելության սխեման և վայրը՝ ընդունարանը, բաժանմունքը, որտեղ իրականացվելու են երեխայի հետագա հետազոտումը և բուժումը:
- COVID-19 վարակի կասկածելի և կոնտակտավոր պացիենտների հետազոտությունները և բուժումը կազմակերպվում են բոքսային բաժանմունքի «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում», ինչի մասին անմիջապես տեղյակ են պահվում հիվանդանոցի համաճարակաբանը և «Արաբկիր» ԲՀ-ի բժշկական տնօրենը:
- Այլ բուժհաստատությունից կամ մեկուսացման վայրերից ուղեգրված COVID-19 հաստատված պացիենտների ընդունումը իրականացվում է անմիջապես հատուկ «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքում՝ շրջանցելով նախաընդունարանը: Դրա մասին անմիջապես տեղյակ են պահվում հիվանդանոցի բժշկական տնօրենը և համաճարակաբանը, իսկ վերջինս տեղեկությունը հաղորդում է Առողջապահության նախարարության համապատասխան ծառայություն:
- Շտապ և անհետաձգելի բուժման կարիք ունեցող, COVID-19 ոչ կասկածելի դեպքերում, հիվանդները նախաընդունարանից տեղափոխվում են հիվանդանոցի ընդունարան, որտեղ իրականացվում է խորհրդատվություն և անհրաժեշտության դեպքում՝ հոսպիտալացում.
    - ✓ ժամը 9:00-15:00 սահմաններում ընդունված հիվանդները ուղղորդվում են հիվանդանոցի համապատասխան բաժանմունքներ,

- ✓ ժամը 15:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 09:00-ի սահմաններում հիվանդները ընդունվում են Անհետաձգելի բուժօգնության բաժանմունք, իսկ առավոտյան բժիշկների համայցից հետո, տեղափոխվում են համապատասխան մասնագիտացված բաժանմունքներ կամ ուղարկվում են տուն:

Սուր և անհետաձգելի հիվանդություններով, COVID-19 կասկածելի կամ կոնտակտավոր, ինչպես նաև COVID-19 հաստատված պացիենտներին հիվանդանոց ընդունելու սխեման ներկայացված է պատկեր 1-ում:

Պատկեր 1



- **9:00-16:00** (աշխատանքային օրեր) **preCOVID** և **COVID** բաժանմունքներում հոսպիտալացված հիվանդների համար պատասխանատվություն են կրում preCOVID/ COVID ծրագրի ղեկավար Անդրեասյան Լիան, բժիշկներ Պապյան Սինամը, Պեպանյան Գայանեն
- **16:00-9:00** (աշխատանքային օրեր) և **9:00-9:00** (ոչ աշխատանքային օրեր) **preCOVID** և **COVID** բաժանմունքներում հիվանդների համար պատասխանատու է 2-րդ հերթապահ բժիշկը և Անհետաձգելի բաժանմունքի հերթապահ բժիշկը, անհրաժեշտության դեպքում ծրագրի ղեկավարը
- **preCOVID** և **COVID** բաժանմունքներում բուժքույրերի և մայրապետների հերթապահությունները՝ համապատասխան բուժանձնակազմի միջոցով, 24 ժամյա հերթապահություններով
- Նեղ մացնագիտական խորհրդատվության անհրաժեշտության դեպքում հրավիրվում է համապատասխան մասնագետը

COVID-19 կասկածելի և կոնտակտավոր պացիենտների հետազոտումը և բուժումը «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում»

- Բոքսային բաժանմունքում իրականացվում է բացառապես շտապ և անհետաձգելի բուժման կարիք ունեցող հիվանդների հետազոտումը և բուժումը:
- Բոքսային բաժանմունքի «“Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում» կազմակերպվում է COVID-19 կասկածելի կամ կոնտակտավոր պացիենտների հետազոտումը և բուժումը:
- Ինտենսիվ թերապիայի անհրաժետության դեպքում COVID-19 վարակով կասկածելի և կոնտակտավոր պացիենտների բուժումը կազմակերպվում է բոքսային բաժանմունքի համապատասխան մեկուսացված սրահում, որը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով:
- COVID-19 կասկածելի կամ կոնտակտավոր պացիենտի ընդունելության հենց առաջին օրը կատարվում է պացիենտի և խնամողի նմուշառում, իսկ նմուշը ուղարկվում է համապատասխան լաբորատորիա:
- Մինչ սահմանված կարգով COVID-19-ի հաստատումը կամ ժխտումը պացիենտը ստանում է համապատասխան բժշկական օգնություն՝ «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում»:
- Բուժանձնակազմը այս պացիենտների հետ աշխատելիս օգտագործում է սահմանված կարգով անհատական պաշտպանիչ միջոցներ:
- COVID-19-ի ժխտման պարագայում պացիենտը տեղափոխվում է հիվանդանոցի համապատասխան մասնագիտական բաժանմունք՝ բուժումը շարունակելու նպատակով:
- COVID-19-ի հաստատման պարագայում պացիենտը տեղափոխվում է հիվանդանոցի «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունք, ինչի մասին անմիջապես տեղյակ է պահվում հիվանդանոցի տնօրինությանը և համաճարակաբանին, իսկ

վերջինս՝ տեղեկությունը հաղորդում է Առողջապահության նախարարության համապատասխան ծառայություն: Պացիենտի հետագա բուժումը «Արաբկիր» ԲՀ-ում կամ այլ բժշկական հաստատությունում որոշում է ԱՆ համապատասխան համակարգող մարմինը:

COVID-19 վարակով հաստատված պացիենտների ընդունելության կարգը, հետազոտումը և բուժումը հատուկ «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքում

- «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքում հոսպիտալացվում են բացառապես COVID-19 հաստատված ախտորոշումով հիվանդները.
    - ✓ COVID-19 հիվանդները, որոնց ախտորոշումը հաստատվել է «Արաբկիր» ԲՀ-ի «“Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում», և որոնք կարիք ունեն շարունակական բուժման,
    - ✓ COVID-19 հիվանդները, որոնց ախտորոշումը հաստատվել է այլ բուժհաստատություններում կամ մեկուսացման վայրերում, և որոնք կարիք ունեն մասնագիտական բուժօգնության «Արաբկիր» ԲՀ-ում (մանկաբուժական և վիրաբուժական ուղղվածության): Այդ պացիենտները ընդունվում են ուղարկող կազմակերպության և «Արաբկիր» ԲՀ-ի նախնական պայմանավորվածության համաձայն:
- Հիվանդների մուտքը դեպի «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունք ապահովվում է նախապես սահմանված կարգով՝ «Արաբկիր» ԲՀ բուժաշխատողի և անվտանգության ծառայողի ուղեկցությամբ՝ շրջանցելով ընդունարանը և կենտրոնական մասնաշենքը, «D» մասնաշենքի առաջին հարկի մուտքով, որտեղ նրանց դիմավորում է բաժանմունքի հերթապահ անձնակազմը:
- COVID-19-ով այն հիվանդները, որոնք ունեն ինտենսիվ թերապիայի կարիք, հոսպիտալացվում են «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքի ինտենսիվ թերապիայի համար նախատեսված հիվանդասենյակում:

Վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի կազմակերպման աշխատանքները COVID-19 վարակի պայմաններում

Հաշվի առնելով վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի բաժանմունքում գտնվող պացիենտների ծանրության աստիճանը՝, առանձնակի ուշադրություն է դարձվում ներհիվանդանոցային վարակի ռիսկի նվազեցմանը.

- բացառվում է ծնողների այցելությունը:
- Կրծքով կերակրվող երեխաների մայրերը այցելության ժամանակ ապահովվում են համապատասխան պաշտպանիչ հագուստով և դիմակով, ինչպես նաև ձեռքերի մշակման համար նախատեսված սպիրտ-պարունակող ախտահանիչ հեղուկով:
- Պացիենտի համար անհրաժեշտ բոլոր պարագաները (սնունդ, հագուստ, հիգիենիկ պարագաներ) փոխանցվում են ներհիվանդանոցային վարակի կանխարգելման թեմայով ուսուցում ստացած բուժաշխատողի միջոցով:
- COVID-19 կասկածելի և կոնտակտավոր պացիենտների ինտենսիվ թերապիան կազմակերպվում է «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքի» ինտենսիվ թերապիայի սրահում, որը կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով:
- COVID-19 հաստատված պացիենտների ինտենսիվ թերապիան կազմակերպվում է «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքի ինտենսիվ թերապիայի սրահում՝ կիրառելով բուժանձնակազմի պաշտպանության բոլոր կանոնները: Բժիշկ-ռեանիմատոլոգը կրում է անհատական պաշտպանական հագուստ՝ միանգամյա օգտագործման վերնահագուստ, պաշտպանիչ ակնոց-վահան, ձեռնոցներ, համապատասխան դիմակ:
- Առանձնակի ուշադրություն է հատկացվում պացիենտին կատարվող միջամտություններին՝ էնդոտրախեալ ինտուբացիա, վերին շնչուղիների սանացիա և այլն: Վերը նշված միջամտություններն իրականացվում են հատուկ պաշտպանական միջոցներով՝ համապատասխան վերնահագուստ, պաշտպանիչ ակնոց-վահան, ձեռնոցներ, ռեսպիրատոր դիմակ N95:
- Պացիենտի հարազատներին երեխայի վիճակի մասին տեղեկատվության տրամադրումը կազմակերպվում է բաժանմունքից դուրս՝ հատուկ առանձնացված սենյակում, բժիշկ-ռեանիմատոլոգի կողմից, պահպանելով սոցիալական հեռավորությունը և կիրառելով մյուս պաշտպանիչ միջոցները: Տեղեկատվություն ստանալու համար առանձնացված սենյակ կարող է մտնել միայն մեկ անձ :

Քրոնիկ հիվանդություններ ունեցող և դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում

Դիսպանսեր ծառայությունները ներառում են ամբուլատոր խորհրդատվություններ, հետազոտություններ և բուժում:

COVID-19 վարակի պայմաններում դիսպանսեր ծառայությունների կազմակերպումը պահանջում է հատուկ ուշադրություն՝ վարակի ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով:

- COVID-19 վարակի պայմաններում խրախուսվում է հնարավորության դեպքում դիսպանսեր ծառայությունների մի մասի կազմակերպումը հեռահար եղանակով:
- Դիսպանսեր պացիետների այցելությունների կանոնակարգման նպատակով յուրաքանչյուր ծառայությունում կազմվում է գալիք շաբաթվա այցերի գրաֆիկը՝ ֆիքսելով բուժող բժշկին, խորհրդատվությունների և պլանավորվող հետազոտությունների օրը և ժամը, որը համաձայնեցվում է ծառայության ղեկավարների հետ:
- Գրաֆիկից դուրս այցեր չեն թույլատվում, ինչի մասին նախապես զգուշացվում են դիսպանսերում հաշվառված պացիենտները:
- Դիսպանսեր խորհրդատվությունների ընթացքում բոլոր բուժաշխատողները կրում են համապատասխան անհատական պաշտպանական միջոցներ:
- Հիվանդության պատմություն հավաքագրելու ժամանակ պահպանում է սոցիալական հեռավորություն:
- Հիվանդին զննելուց առաջ և հետո բուժաշխատողներն ախտահանում են ձեռքերը, ինչպես նաև սենյակն ու օգտագործած գործիքները:

Տեղեկություն պացիենտների համար

- Բոլոր դիսպանսեր խորհդատվությունները և հետազոտությունները պարտադիր կատարվում են նախնական պայմանավորվածության համաձայն:
- Դիսպանսեր-պացիենտները պետք է հետաձգեն այցելությունը, եթե ունեն ջերմության բարձրացում, հազ, հարբուխ, դժվարացած շնչառություն կամ վերին շնչուղիների հիվանդությունների այլ նշաններ, ինչի մասին պետք է տեղեկացնեն մատենավարին:
- Դիսպանսեր հիվանդները պետք է նախօրոք ճշտեն խորհրդատվության ամսաթիվը և ժամը՝ համապատասխան ծառայության հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստով.
  - Ռևմատոլոգիական դիսպանսեր ծառայություն՝հեռ. 010236880 / 2152,rheumatology@arabkirmc.am,
  - Նյարդաբանական դիսպանսեր ծառայություն՝հեռ. 060650095, neurology@arabkirmc.am)
  - Պարբերական հիվանդության դիսպանսեր ծառայություն՝հեռ. 010262130, 010236883/ 1040 կամ 1216

- Գաստրոէնտերոլոգիական և հեպատոլոգիական դիսպանսեր ծառայություն՝ հեռ. 010262130, 010236883/1216
- Ալերգոլոգիական դիսպանսեր ծառայություն՝հեռ. 010236883 / 2136 կամ 2111; Allergology@arabkirmc.am
- Էնդոկրինոլոգիական դիսպանսեր ծառայություն՝ հեռ. 010 23 68 80/ 1103
- Նեֆրոլոգիական դիսպանսեր ծառայություն՝ հեռ. 010236880 /1002
- Ուրո-վիրաբուժական դիսպանսեր ծառայություն՝ հեռ. 238 526/ 1149, 1141
- Սուրդոլոգիական դիսպանսեր ծառայություն՝ հեռ.՝010 231953; 010 236883/ 1198, 1196

- Նախապես կազմած օրվա գրաֆիկը, որտեղ նշված է հիվանդների ընդունելության ժամը և սպասարկող բժշկի անունը, դիսպանսեր ծառայություններից փոխանցվում է մատենավարներին և մուտքի մոտ այցելուներին դիմավորող բուժանձնակազմին՝ պլանային հիվանդների կարգավորված մուտքը բուժհաստատություն ապահովելու նպատակով:
- Ծառայության սենյակներում պահպանվում են մեկ «բժիշկ-մեկ հիվանդ», «մեկ բուժքույր-մեկ հիվանդ» սկզբունքները:
- Այցելուներին նախապես զգուշացվում է նշանակված ժամը խստիվ պահպանելու կարևորության մասին և այն, որ խախտումների դեպքում կարող է մերժվել սպասարկումը:
- Դիսպանսեր-հիվանդների մուտքը իրականացվում է պլանային այցելությունների համար նախատեսված «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱԻ գլխավոր մուտքով կամ «Արաբկիր Պլյուս» մասնաշենքի մուտքով (*տես Հավելված 1):*
- Հիվանդին պետք է ուղեկցի միայն մեկ անձ (ցանկալի է նույն անձը՝ կրկնակի այցերի դեպքում):
- Հիվանդը և ուղեկցողը պետք է կրեն դիմակներ:
- Մուտքի մոտ, ըստ վերը նկարագրված պահանջվող կարգի, յուրաքանչյուր իրականացվում է այցելուի ջերմաչափում և հավաքագրվում է համաճարակաբանական անամնեզ:

Պլանային ամբուլատոր (արտահիվանդանոցային) խորհրդատվությունների կամակերպում COVID-19 վարակի պայմաններում

Պլանային արտահիվանդանոցային ծառայությունը ներառում է ամբուլատոր խորհրդատվություններ, հետազոտություններ և բուժում:

- «Արաբկիր» ԲՀ-ի կենտրոնական մասնաշենքի մուտքով սպասարկվում են մանկաբուժական, թերապևտիկ, ստոմատոլոգիական, գինեկոլոգիական, ակնաբուժական, սրտաբանական, ալերգոլոգիական, թոքաբանական,

գաստրոէնտերոլոգիական, պարբերական հիվանդության, քիթ-կոկորդ-ականջաբանական, սուրդոլոգիական, էնդոկրինոլոգիական ամբուլատոր ծառայությունների կարիք ունեցող պացիենտները: Շենքի նախասրահում կատարվում է այցելուների ջերմաչափում և համաճարակաբանական անամնեզի ճշտում՝ ըստ պահանջվող կարգի:

- «Արաբկիր Պլյուս» և հարակից մասնաշենքերում իրականացվող պլանային արտահիվանդանոցային ծառայություններն են՝ ռևմատոլոգիական, նյարդաբանական, նյարդավիրաբուժական, օրթոպեդիայի, նեֆրոլոգիական, հեմոդիալիզ, ուրովիրաբուժական, ցավի կենտրոնի, լազերային վիրաբուժության, լազերային կոսմետոլոգիայի, ինչպես նաև անհատական սպասարկման ծրագրում ընգրկված ծառայությունները: Նշված ծառայություններից օգտվող հիվանդների համար հատկացված է «Արաբկիր Պլյուս» մասնաշենքի մուտքը, որտեղ, ըստ պահանջվող կարգի, կատարվում է այցելուների ջերմաչափում և համաճարակաբանական անամնեզի ճշտում: COVID-19 վարակի պայմաններում այս ծառայությունների կազմակերպումը պահանջում է հատուկ ուշադրություն՝ վարակման ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով:
- Բոլոր բուժաշխատողները պետք է կրեն դիմակներ և հաճախ ախտահանեն ձեռքերը:
- Հիվանդության պատմություն հավաքագրելու ժամանակ պահպանվում է սոցիալական հեռավորություն:
- Հիվանդին զննելուց առաջ և հետո ախտահանվում են ձեռքերը:
- Յուրաքանչյուր հիվանդին զննելուց հետո կատարվում է սենյակի և օգտագործված գործիքների ախտահանում:

Տեղեկություն պացիենտների համար

- Բոլոր պլանային խորհրդատվությունները և հետազոտությունները կատարվում են նախօրոք հերթագրման պայմանով: Հերթագրման համար զանգահարել համապատասխան ծառայության հեռախոսահամարով:
- Եթե հիվանդը նախօրոք գրանցման ժամանակ չի նշում կոնկրետ մասնագետին, նրան ընդունում է տվյալ ժամին ազատ համապատասխան մասնագետը:
- Հիվանդին պետք է ուղեկցի միայն մեկ անձ (միշտ նույն անձը՝ կրկնակի այցերի դեպքում):
- Հիվանդը և ուղեկցողը պետք է կրեն դիմակներ, պահպանեն սոցիալական հեռավորություն:

- Պլանային ծառայություններից օգտվող քաղաքացիները պետք է նախօրոք ճշտեն խորհրդատվության ամսաթիվը և ժամը՝ համապատասխան ծառայության հեռախոսահամարով.
    - մանկաբուժություն (010-23-68-83 / 2127)
    - մեծահասակների թերապևտիկ ծառայություն (010-23-68-80 / 2127)
    - ստոմատոլոգիա (010-23-68-80 / 1216)
    - գինեկոլոգիա (010-23-68-80 / 2127)
    - ակնաբուժություն (010-23-68-83 / 2127)
    - մաշկաբանություն (010-23-68-83 / 1216)
    - սրտաբանություն (010-23-68-83 / 1216)
    - ալերգոլոգիա (010-23-68-83 / 2136 կամ 2111)
    - թոքաբանություն (010-23-68-83 / 2136 կամ 2111)
    - գաստրոէնտերոլոգիա (010-23-68-83 / 2115 կամ 1216)
    - պարբերական հիվանդության կենտրոն (010-23-57-64 / 2210)
    - քիթ-կոկորդ-ականջաբանություն (010-23-57-64 / 1195)
    - սուրդոլոգիա (010-23-57-64 / 1196 կամ 1198)
    - էնդոկրինոլոգիա (010-23-57-64 / 1103 կամ 1216)
    - ռևմատոլոգիա (010-23-68-80 / 2152)
    - նյարդաբանություն, էպիլեպսիա (060-40-03-00 / 2221)
    - նյարդավիրաբուժություն (060-40-03-00 / 2221)
    - օրթոպեդիա (010-23-00-96)
    - նեֆրոլոգիա (010-23-57-64 / 1002)
    - հեմոդիալիզ (010-23-68-80 / 1212)
    - ուրոլոգիա (010-23-68-80 / 1149)
    - վիրաբուժություն (010-23-68-80 / 1206 կամ 1149)
    - ցավի կոնտրոն (060-40-03-00 / 2219)
    - լազերային վիրաբուժություն (060-40-03-00 / 1023 կամ 2220)
    - լազերային կոսմետոլոգիա (060-40-03-00 / 1049 կամ 2220)
    - կլինիկական ֆիզիոթերապիա (010-23-68-80 / 1168 կամ 1169)
    - վերականգնողական ծառայություն ԱրԲԵՍ ԱԿ (010-26-47-62 , 010-26-11-42)
    - վերականգնողական ծառայություն Գավառի ԵԶՎԿ (026-46-11-14; 095-55-70-29)
    - վերականգնողական ծառայություն Արտաշատի ԵԶՎԿ (023-52-25-10; 091-53-20-26)
    - վերականգնողական ծառայություն Իջևանի ԵԶՎԿ(026-34-04-64; 094-44-40-49)

- հոգեկան առողջության ծառայություն (010-23-13-52/2211 կամ 2212)
- հոգեբանասոցիալական ծառայություն (010-23-13-52/1189)
- Արաբկիր Պլյուս անհատական սպասարկման ծառայություն (060-40-03-00 / 2220)
- ռենտգեն-ուլտրաձայնային-կոմպյուտերային տոմոգրաֆիա հետազոտություններ (010-23-30-30 կամ 010-23-68-83 / 1142)
- լաբորատորիա (010-23-68-80 / 1136)

Պլանային վիրաբուժական գործունեության կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում

Ներհիվանդանոցային (ստացիոնար) վիրաբուժական բուժօգնություն

«Արաբկիր» ԲՀ-ում պլանային վիրաբուժական (այդ թվում ուրոլոգիական, օրթոպեդիկ, քիթ-կոկորդ-ականջաբանական, պլաստիկ վիրաբուժությական, նյարդավիրաբուժական) գործունեությունը կարգավորվում է հետևյալ կանոններով՝

1. Պլանային կարգով ստացիոնար բուժօգնության նպատակով վիրաբուժական բաժանմունք կարող են ընդունվել միայն այն հիվանդները որոնք և նրանց ուղեկցող անձինք չեն մտնում COVID–19 ռիսկային խմբի մեջ (***Հավելված 1***):
2. Պլանային վիրաբուժական ծառայությունների ներդրումը ցանկալի է սկսել այն դեպքերից, որոնք չեն պահանջում երկարատև հետվիրահատական հիվանդանոցային խնամք: Բացառություն են կազմում այն դեպքերը, որոնց պլանային միջամտության հետաձգումը կարող է առաջ բերել այս կամ այն օրգանի ֆունկցիաայի իջեցում կամ որոշակի բարդություններ:
3. Պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնության և սպասարկման համար ընդունելության հիմք են հանդիսանում ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և վավեր ուղեգիրը՝ տեղամասային պոլիկլինիկայից:
4. Պլանային կարգով ընդունվող պացիենտի ընդունելությունը պետք է լինի բուժող (վիրահատող) բժշկի հետ նախօրոք համաձայնեցված՝ նախնական խորհրդատվության ընթացքում կամ հեռախոսակապի միջոցով, և հերթագրված՝ ընդունարանում գտնվող պլանային ընդունելությունների հերթագրման մատյանում, որում ֆիքսված են հիվանդանոց ներկայանալու հստակ օրն և ժամը: Ընդունելությունը կազմակերպվում է 9:30-12:00-ն ընկած ժամանակահատվածում:

5. Գրանցամատյանում հիվանդների հերթագրումը պետք է կատարվի այնպես, որ յուրաքանչյուր հիվանդի ընդունելությանը հատկացվի միջին հաշվով 20 – 25 րոպե ժամանակ:
6. Հերթագրման ցուցակը պետք է հասանելի լինի բոլոր վիրահատող բժիշկներին (ցանկալի է ժամանակի ընթացքում աստիճանաբար ներդնել նշված ցուցակի կառավարման միասնական էլեկտրոնային համակարգ):
7. Բուժման ընթացքում պացիենտին հիվանդանոցում պետք է խնամի միայն 1 անձ (ծնող կամ խնամակալ):
8. Պացիենտը և նրան ուղեկցողը հիվանդանոցում պետք է կրեն անհատական պաշտպանական միջոցներ (դիմակ)՝ բացառությամբ այն դեպքերի, երբ պացիենտը 2 տարեկանից փոքր է:
9. Պացիենտի և նրան ուղեկցող անձի մուտքը վիրաբուժական, օրթոպեդիկ, ուրոլոգիական, նյարդավիրաբուժական ընդունարաններ ապահովվում է «Արաբկիր Պլյուս» մասնաշենքի մուտքով, իսկ քիթ-կոկորդ-ականջաբանական և պլաստիկ վիրաբուժության համար ընդունելությունը պետք է ապահովել «Արաբկիր» ԲՀ-ի գլխավոր մուտքով: Բոլոր պացիենտներին համապատասխան մուտքերի մոտ դիմավորում է համակարգող բուժքույրը, սահմանված կարգով իրականացնում ջերմաչափում, համաճարակաբանական անամնեզի հավաքագրում: Ընդունման հակացուցումներ չլինելու դեպքում բուժքույրը ուղղորդում է դեպի հապապատասխան ընդունարան:
10. Ընդունարանում հիվանդության պատմությունը ձևակերպելուց հետո տեղում կազմակերպվում են տվյալ պաթոլոգիայի համար անհրաժեշտ լաբորատոր հետազոտությունները: Ընդունելության ժամերին լաբորատորիայի աշխատակիցը մեկը ընդունարանի մոտ առանձնացված սենյակում վերցնում է նշանակված հետազոտությունների նմուշները:
11. Գործիքային հետազոտությունների և լրացուցիչ մասնագիտական խորհրդատվությունների կարիքի առաջացման դեպքում դրանք կազմակերպվում են ընդունելությունից հետո, հիվանդանոցային պայմաններում:
12. Ընդունվելուց հետո հիվանդն ու խնամակալը բուժքրոջ ուղեկցությամբ ընդունարանից ուղեկցվում են համապատասխան բաժանմունք և տեղավորվում հիվանդասենյակում:
13. Բաժանմունքում բուժանձնակազմը հսկում է հիվանդի և խնամողի կողմից ներհիվանդանոցային հակահամաճարակաբանական կանոնների պահպանումը, անհրաժեշտության դեպքում տրվում են լրացուցիչ բացատրություններ և հրահանգներ:

14. Հիվանդների խորհրդատվությունը և զննումը անեսթեզիոլոգ–ռեանիմատոլոգների կողմից կազմակերպվում է հիվանդասենյակներում՝ ժամը 15:00 –ից սկսած, լաբորատոր և գործիքային հետազոտությունների արդյունքների առկայության դեպքում:
15. Բաժանմունք ընդունված պացիենտը մինչև պլանային վիրահատությունը գտնվում է բուժանձնակազմի ուժեղացված հսկողության տակ, որպեսզի COVID-19 ախտանշանների սկսվելու դեպքում դրանք հայտնաբերվեն հնարավորիս վաղ:
16. Պացիենտի հոսպիտալացման ողջ ընթացքում տեսակցություններն արգելվում են, իսկ սննդի, և անհրաժեշտ պարագաների փոխանցումը հիվանդին իրականացվում է հիվանդանոցի մուտքի մոտ հերթապահող միջին բուժանձնակազմի միջոցով:
17. Բաժանմունքից թե՛ պացիենտի, և թե՛ նրա խնամակալի ելումուտը խստիվ արգելվում է:
18. Հիվանդի դուրս գրումից հետո նրա հետվիրահատական վարումը կազմակերպվում է հնարավորինս հեռավար կարգով:
19. Հաշվի առնելով ներկա համաճարակաբանական իրավիճակը՝ հիվանդի ծնողին կամ խնամակալին տրամադրվում են հեռախոսահամար(ներ)՝ անհրաժեշտության դեպքում բժշկի և/կամ հիվանդանոցի հերթապահ բուժանձնակազմի հետ հետադարձ կապը պահելու նպատակով:

Պլանային վիրաբուժական խորհրդատվության և արտահիվանդանոցային (ամբուլատոր) բուժօգնության կազմակեպումը

Պլանային կարգով խորհրդատվության կամ ամբուլատոր բուժօգնության նպատակով վիրաբուժական ծառայություններ կարող են դիմել միայն այն հիվանդները և նրանց ուղեկցող անձինք, որոնք COVID–19-ի համաճարակաբանական չափորոշիչներով չեն մտնում ռիսկի խմբի մեջ (*տես Հավելված 1*):

- Պետական պատվերի շրջանակներում անվճար բժշկական օգնության և սպասարկման համար ընդունելության հիմք են հանդիսանում ծննդյան վկայականը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ և վավեր ուղեգիրը՝ տեղամասային պոլիկլինիկայից:
- Պլանային կարգով դիմող պացիենտի ընդունելությունը նախօրոք համաձայնեցվում է բուժող բժիշկի հետ (հեռախոսակապի միջոցով) :
- Համապատասխան վիրաբուժական ծառայության մատենավարը ֆիքսում է պացիենտի հիվանդանոց ներկայանալու հստակ օրն ու ժամը, հերթագրումը

կազմակերպում այնպես, որ բացառվեն այցելուների կուտակումները և պահպանվի նրանց միջև սոցիալական հեռավորությունը:

- Պլանային խորհրդատվության եկած պացիենտներին համապատասխան մուտքերի մոտ դիմավորում է համակարգող բուժքույրը, սահմանված կարգով իրականացնում ջերմաչափում, համաճարակաբանական անամնեզի հավաքագրում: Ընդունման հակացուցումներ չլինելու դեպքում բուժքույրը ուղղորդում է նրանց համապատասխան մասնագետի աշխատասենյակ:
- Այլ մասնագետների լրացուցիչ խորհրդատվության կամ լրացուցիչ հետազոտությունների անհրաժեշտության դեպքում պացիենտի և նրան ուղեկցողի տեղաշարժը բժշկական համալիրում կազմակերպվում է համապատասխան բաժնի կրտսեր բուժաշխատողի միջոցով:
- Հիվանդների «հոսքի» ճիշտ կառավարման նպատակով՝ ցանկալի է յուրաքանչյուր վիրաբույժի համար սահմանել որոշակի աշխատանքային գրաֆիկ՝ պլանային վիրահատությունների, խորհրդատվությունների և ամբուլատոր միջամտությունների համար:

COVID-19 կասկածելի, կոնտակտավոր կամ հաստատված հիվանդների տեղափոխումը վիրահատարան

- COVID-19 կասկածելի և կոնտակտավոր պացիենտները վիրահատարան տեղափոխվում են «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքից», իսկ COVID-19 հաստատված հիվանդները՝ «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքից:
- Հիվանդին ուղեկցում են անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգը, բուժքույր-անեսթեզիստը, մայրապետը:
- Ուղեկցող անձնակազմը կրում է անհատական պաշտպանիչ միջոցներ (պաշտպանիչ արտահագուստ, եռակի ձեռնոցներ, ռեսպիրատոր դիմակ N95, պաշտպանիչ դիմավահան):
- Ոչ ինտուբացված հիվանդների տեղափոխումն իրականացվում է COVID-19 հիվանդների համար նախատեսված մեկուսացում ապահովող հատուկ պատգարակով: Հիվանդը կրում է վիրաբուժական դիմակ (եթե հնարավոր է) :
- Ինտուբացված հիվանդները տեղափոխվում են թոքերի պորտատիվ արհեստական օդափոխության սարքին միացված:
- Հիվանդի անցած ճանապարհը ախտահանվում է քլոր պարունակող ախտահանիչով:

- Հիվանդը տեղափոխվում է «Հատուկ մեկուսացված վիրահատարան»:
- «Հատուկ մեկուսացված վիրահատարանում» հիվանդին դիմավորում է անհատական պաշտպանիչ միջոցներ կրող բուժանձնակազմը:
- Ամբողջ բժշկական տեխնիկան ծածկված է պոլիէթիլենային ծածկոցներով :
- Վիրահատությունից հետո հիվանդը տեղափոխվում է COVID-19 կասկածելի, կոնտակտավոր կամ հաստատված հիվանդների համար նախատեսված «Հատուկ մեկուսացված արթնացման սրահ»:
- Էքստուբացված հիվանդները տեղափոխվում են «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունք» կամ «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունք՝ արթնացման սրահից, իսկ ինտուբացված հիվանդներն՝ անմիջապես վիրահատարանից՝ կիրառելով վերը նշված կանոնները:
- Հիվանդի անցած ճանապարհը նորից է ախտահանվում:
- Սահմանված կարգով ախտահանվում է վիրահատարանը:
- Վիրահատությանը մասնակցած բուժանձնակազմի պաշտպանիչ միջոցները են գցվում են հատուկ վտանգավոր թափոնների համար նախատեսված տարրայի մեջ:

Հոսպիտալացման նպատակով պլանային մանկաբուժական բաժանմունքներում պացիենտների ընդունելությունը և վարումը COVID-19 վարակի պայմաններում

- Մանկաբուժական պրոֆիլի, այդ թվում մանկաբուժական նեղ մասնագիտական բժշկական օգնության կարիք ունեցող պացիենտների ընդունելությունը հոսպիտալացման նպատակով իրականացվում է համապատասխան ամբուլատոր ծառայության մասում՝ «Արաբկիր» ԲՀ-ի կամ «Արաբկիր Պլուսի» մասնաշենքերի համապատասխան հատվածում՝ յուրաքանչյուր բժշկի ամբուլատոր ընդունելության սենյակում:
- Հիվանդների մուտքը իրականցվում է «Արաբկիր» ԲՀ գլխավոր մուտքով կամ «Արաբկիր Պլուս» մասնաշենքի մուտքով:
- Մուտքերի մոտ ըստ պահաջվող կարգի իրականացվում է հիվանդի և խնամողի ջերմաչափում, ճշտվում է համաճարակաբանական անամնեզը՝ պահպանելով

սոցիալական հեռավորությունը: 37.0^{0}C և բարձր ջերմության և դրական անամնեզի դեպքում հիվանդը մեկուսացվում է համապատասխան սենյակում և այդ մասին տեղեկացվում է հիվանդանոցի համաճարակաբանը:

- Հիվանդների հետ շփումը առավելագույն չափ նվազեցվում է՝ պահպանելով գործող համաճարակաբանական պահանջները:
- Հիվանդասենյակ մտնելուց առաջ և հետո ձեռքերը ախտահանվում են սպիրտ-պարունակող ախտանահանիչ հեղուկով:
- Հիվանդների տեղաշարժը հիվանդանոցում հնարավորինս նվազեցվում է: Այլ մասնագետների խորհրդատվության անհրաժեշտության դեպքում նեղ մասնագետները հրավիրվում են հիվանդներին տեղում զննելու:
- Բոլոր այցելությունները հիվանդանոց արգելվում են:
- Հնարավորության դեպքում ցանկալի է հիվանդներին վարել ցերեկային ստացիոնարի պայմաններում կամ կազմակերպել տնային ստացիոնար ծառայություններ:

Ներհիվանդանոցային խորհրդատվությունների կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում

- Առավելագույն չափ նվազեցվում է հիվանդների տեղաշարժը հիվանդանոցում: Ներհիվանդանոցային խորհրդատվության անհրաժեշտության դեպքում մասնագետները հրավիրվում են հիվանդներին զննելու տեղում:
- COVID-19 կասկածելի, կոնտակտավոր կամ հաստատված դեպքերի խորհրդատվությունը հարկավոր է սկսել նախ հեռակա կապի միջոցով հիվանդի կամ նրա խնամողի հետ, ինչից հետո շարունակել համապատասխան հատուկ բաժանմունքի հիվանդասենյակում՝ առավելագույնս նվազեցնելով շփման ժամանակը:
- COVID-19 կասկածելի, կոնտակտավոր և հաստատված դեպքերի խորհրդատվության ժամանակ հարկավոր է կրել հատուկ պաշտպանիչ հագուստ և N95 ռեսպիրատոր դիմակ:
- Մյուս հիվանդների խորհրդատվությունը սկսել սոցիալական հեռավորություն պահպանելով, իսկ զննման ժամանակ կրել դիմակ:

Ցերեկային ստացիոնարի վարում COVID-19 վարակի պայմաններում

- COVID-19 վարակի պայմաններում խրախուսելի և ցանկալի է հիվանդների բուժումը ցերեկային ստացիոնարի ձևով:
- Հիվանդների ընդունելությունը ցերեկային ստացիոնար վարման նպատակով պետք է իրականացնել ծառայության ամբուլատոր մասում, իսկ հիվանդների մուտքը ապահովել «Արաբկիր» ԲՀ գլխավոր մուտքով կամ «Արաբկիր Պլյուս« մասնաշենքի մուտքով:
- Մուտքի մոտ, ըստ պահաջվող կարգի, իրականացվում է հիվանդի և խնամողի ջերմաչափում, ճշտվում է համաճարակաբանական անամնեզը՝ պահպանելով սոցիալական հեռավորությունը:
- Հիվադության պատմագրերի բացումը իրականացվում է տեղում, հիվանդության պատմագրերը պետք է լրացվեն և վարվեն էլեկտրոնային տարբերակով:
- Հարկավոր է առավելագույնս նվազեցնել հիվանդների տեղաշարժը տնից հիվանդանոց՝ հնարավորության դեպքում ընդլայնելով տնային ստացիոնարի ծառայությունները:

Պլանային վերականգնողական ծառայությունների կազմակերպում COVID-19 վարակի պայմաններում

Պլանային վերականգնողական ծառայությունները ներառում են ամբուլատոր խորհրդատվություններ և վերականգնողական բուժում, դիսպանսեր հիվանդների և ներհիվանդանոցային խորհրդատվություններ, հոսպիտալացված հիվանդների վերականգնողական բուժում:

Վերականգնողական ծառայությունները «Արաբկիր» ԲՀ կողմից իրականացվում են.

- Երևան քաղաքում – «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնում,
- Երևան քաղաքում - «Արաբկիր» ԲՀ կլինիկական ֆիզիոթերապիայի բաժանմունքում
- Երևան քաղաքում - «Արաբկիր» ԲՀ սուրդոլոգիական կենտրոնում
- Գավառ քաղաքում - Գավառի «Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնում»
- Արտաշատ քաղաքում - Արտաշատի «Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնում»

- Իջևան քաղաքում – Իջևանի «Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոնում»

COVID-19 վարակի պայմաններում այս ծառայությունների կազմակերպումը պահանջում է հատուկ ուշադրություն՝ վարակման ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով:

Ամբուլատոր պլանային խորհրդատվություններ և վերականգնողական բուժում

Տեղեկություն պացիենտների համար

- «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնում, մարզային «Երեխայի զարգացման և վերականգնողական կենտրոններում» (ԵԶՎԿ), «Արաբկիր» ԲՀ-ում բոլոր պլանային խորհրդատվությունները և վերակագնողական բուժման նպատակով այցերը կատարվում են նախօրոք գրանցմամբ:
- «ԱրԲԵՍ» ԱԿ ուղեգրվող հիվանդները, որոնք ունեն անվճար բժշկական ծառայություններ ստանալու իրավունք, պետք է նախևառաջ ճշտեն ծառայության համակարգողի հետ խորհրդատվության ամսաթիվը և ժամը (հեռ.՝ 010 261142; 010 264762), որից հետո ուղեգիր վերցնեն տեղամասային պոլիկլինիկայից:
- Ինքնահոս դեպքերում ևս (վճարովի հիմունքներով ծառայություններ) պարտադիր է հիվանդի նախօրոք հերթագրումը (հեռ. 010 261142; 010 264762):
- Մարզային ԵԶՎԿ-ներում իրականացվող խորհրդատվության ամսաթիվը և ժամը որոշելու, ինչպես նաև ուղեգերման կարգին ծանոթանալու համար զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝
  - Գավառի ԵԶՎԿ, հեռ.՝ 026-46-11-14; 095-55-70-29
  - Իջևանի ԵԶՎԿ, հեռ՝026-34-04-64; 094-44-40-49.
  - Արտաշատի ԵԶՎԿ, հեռ.՝ 023-52-25-10; 091-53-20-26

  «Արաբկիր» ԲՀ կլինիկական ֆիզիոթերապիայի բաժանմունքում վերականգնողական ծառայության և խորհրդակցության ամսաթիվը և ժամը ճշտելու, ինչպես նաև ուղեգերման կարգին ծանոթանալու համար զանգահարել 010-23-80-89 / ներքին. 1168:
- «Արաբկիր» ԲՀ սուրդոլոգիական ծառայությունում խորհրդատվության և սուրդոմանկավարժական վերականգնողական բուժման նպատակով պարտադիր է նախապես գրանցումը՝010-23-19-53; 010-23-68-83 /ներքին. 1198 կամ 1196:
- Պլանային խորհրդատվություն ստացող հիվանդների մուտքը «Արաբկիր» ԲՀ վերականգնողական բաժանմունքի մասնաշենք իրականացվում է բակի կողմից՝ շրջանցելով հիմնական մուտքը:

- Վերականգնողական ծառայությունների մատուցման ժամանակ երեխայի ծնողը կամ ուղեկցողը սպասում է շենքի բակում, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսված է համատեղ աշխատանք ծնողի հետ:
- Վերականգնողական ծառայություններ մատուցելու ժամանակ բոլոր կենտրոնների և մասնաճուղերի մուտքերը պահվում են փակ և բացվում են ներսից՝ միայն երեխա ընդունելիս կամ ճանապարհելիս:
- Ծառայությունների համակարգողները և բժիշկ-վերականգնողաբանները, ելնելով երեխայի վերակագնողական բուժման անհատական պլանից և նախապես գրանցված պացիենտների մասին տվյալներից, կազմում են համապատասխան շաբաթվա և օրվա այցերի գրաֆիկ՝ հաշվի առնելով վերականգոնղական թիմի բոլոր մասնագետների մոտ պարապմունքների և խորհրդատվությունների համար գրանցված պացիենտների մասին տվյալները, նպատակ ունենալով կանխարգելելու պացիենտների ավելորդ կուտակումները և շփումները:
- Պացիենտներին գրանցում են այնպես, որ ամեն այցելուից հետո հնարավոր լինի 20-30 րոպե հատկացնել սենյակը և օգտագործված պարագաները ախտահանելու և տարածքը օդափոխելու համար:
- Մուտքի մոտ կատարվում է յուրաքանչյուր այցելուի ջերմաչափում և համաճարակաբանական անամնեզի հավաքագրվում: 37.0^{0}C -ից բարձր ջերմության պարագայում կատարվում է կրկնակի ստուգում սնդիկային ջերմաչափով: Բարձր ջերմության և կասկածելի համաճարակաբանական անամնեզի դեպքում իրականացվում է երեխայի և ուղեկցողի մեկուսացում համապատասխան սենյակում և այդ մասին տեղեկացվում է հիվանդանոցի համաճարակաբանը:
- Պացիենտին պետք է ուղեկցի միայն մեկ անձ (ցանկալի է միշտ նույն անձը՝բազմակի այցերի դեպքում):
- Պացիենտը և ուղեկցողը պետք է կրեն դիմակներ (երեխայի պարագայում՝ եթե նրա դիմակը չի խանգարի պարապմունքին):
- Բոլոր բուժաշխատողները և պացիենտները թերապիայից առաջ և հետո լվանում են իրենց ձեռքերը կամ մշակում ախտահանիչ լուծույթով:

Տեղեկություն բուժաշխատողների համար

- Պացիենտների ընդունելությունը իրականացվում է երկուշաբթի – ուրբաթ օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00:
- Բոլոր բուժաշխատողները կրում են համապատասխան անհատական պաշտպանական միջոցներ: Հիվանդության պատմություն հավաքագրելու ժամանակ պահպանվում է սոցիալական հեռավորություն:

- Պարապունքները հնարավորության դեպքում իրականացվում են ձեռնոցներով և դիմակներով, պարապունքից առաջ և հետո պարտադիր ախտահանվում են ձեռքերը:
- Յուրաքանչյուր հիվանդին զննելուց հետո կատարվում է սենյակի օդափոխություն և ախտահանում:
- Վերականգնողական բուժում ստացող յուրաքանչյուր երեխայի հետ պարապմունքը տևում է 30 րոպե, որից հետո 20-30 րոպե տրամադրվում է աշխատանքային տարածքի օդափոխության, օգտագործված սարքավորումների, սեղանների, աթոռների, խաղերի և այլ պարագաների ախտահանման համար:
- Հնարավորության դեպքում որոշ ծառայություններ իրականացվում են հեռահար եղանակով:
- Փաստաթղթաշրջանառությունը մեծամասամբ իրականացվում է էլեկտրոնային եղանակով:

Արաբկիր բժշկական համալիրում հոսպիպտալացված հիվանդների խորհրդատվություն և բուժում

- Վերականգնողական ծառայությունների իրականացումը հիվանդանոցում հոսպիպտալացված հիվանդների համար իրականացվում է բացառապես հիմնական բուժումը իրականացնող բաժանմունքի տարածքում՝ հիվանդասենյակում կամ միջամտության սենյակում:
- Վերականգնողական ծառայությունների օրվա պլանը մշակվում և հաստատվում է ծառայության ղեկավարի կողմից՝ տարբեր բաժանմունքներից նախօրոք on-line ստացված դիմումների հիման վրա:
- Ֆիզիոթերապիստների աշխատանքը կազմակերպվում է՝ պաշտպանելով բոլոր ներհիվանդանոցային հակահամաճարակաբանական նորմերը:
- Ֆիզիոթերապիստները միջամտությունները իրականացնելուց առաջ և հետո մշակում են ձեռքերը սպիրտ-պարունակող ախտանահանիչ հեղուկով:
- Հիվանդության պատմագրերը լրացվում են էլեկտրոնային եղանակով

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պլանային գործունեության վերսկսման ընթացքում բոլոր ծառայությունները պետք է մշակեն իրենց ներքին աշխատանքային կանոնակարգերը՝ օգտագործվող սարքավորումների հատուկ ախտահանման ռեժիմի ապահովման նպատակով: Այդ կանոնակարգերը համաձայնեցվում են տնօրինության հետ և հաստատվում են ծառայության ղեկավարների կողմից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Արաբկիր բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտում» անհետաձգելի և պլանային բժշկական գործունեության կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում_____2

«Արաբկիր» ԲՀ-ում անհետաձգելի և պլանային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև բժշկական անձնակազմի համար առանձնացված մուտքերի նկարագրություն / Հավելված 1/_____5

COVID-19 վարակի պայմաններում «Արաբկիր» ԲՀ-ի առանձին ստորաբաժանումներում անհետաձգելի և պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը / Հավելված 2/_____6

Աշխատանքի կազմակերպումն ընդունարանում, անհետաձգելի բուժօգնության և բոքսային բաժանմունքներում_____6

COVID-19 կասկածելի և կոնտակտավոր պացիենտների հետազոտումը և բուժումը «Ժամանակավոր մեկուսացման բաժանմունքում»_____9

COVID-19 վարակով հաստատված պացիենտների ընդունելության կարգը, հետազոտումը և բուժումը հատուկ «Իզոլացված թոքաբանական (COVID)» բաժանմունքում 10

Վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի կազմակերպման աշխատանքները COVID-19 վարակի պայմաններում 10

Քրոնիկ հիվանդություններ ունեցող և դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների պլանային բժշկական ծառայությունների կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում 11

Տեղեկություն պացիենտների համար 12

Պլանային ամբուլատոր (արտահիվանդանոցային) խորհրդատվությունների կամակերպում COVID-19 վարակի պայմաններում 13

Տեղեկություն պացիենտների համար 14

Պլանային վիրաբուժական գործունեության կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում 16

Ներհիվանդանոցային (ստացիոնար) վիրաբուժական բուժօգնություն 16

Պլանային վիրաբուժական խորհրդատվության և արտահիվանդանոցային (ամբուլատոր) բուժօգնության կազմակեպումը 18

COVID-19 կասկածելի, կոնտակտավոր կամ հաստատված հիվանդների տեղափոխումը վիրահատարան 19

*Հոսպիտալացման նպատակով պլանային մանկաբուժական բաժանմունքներում պացիենտների ընդունելությունը և վարումը COVID-19 վարակի պայմաններում*_____20

*Ներհիվանդանոցային խորհրդատվությունների կազմակերպումը COVID-19 վարակի պայմաններում*_____22

*Ցերեկային ստացիոնարի վարում COVID-19 վարակի պայմաններում*_____22

*Պլանային վերականգնողական ծառայությունների կազմակերպում COVID-19 վարակի պայմաններում*_____23

*Ամբուլատոր պլանային խորհդատվություններ և վերականգնողական բուժում*__22

Տեղեկություն պացիենտների համար_____23
Տեղեկություն բուժաշխատողների համար_____25

*Արաբկիր բժշկական համալիրում հոսպիպտալացված հիվանդների խորհրդատվություն և բուժում*_____25